Շուշանիկ Կուրղինյան

Արծվին

Դու ազատ կը թռչես դեպի վեր,
Դու ունես զույգ հզոր, լայն թևեր .
Քո հոգին լեռներում բարձրանիստ
Միշտ անկախ՝ հպարտ է քո հանգիստ:

Անհունի ծալքերի դու ընկեր՝
Բայց գերի բնազդին գիշակեր,
Շատ անգամ ջինջ, հստակ եթերում
Քո ճանկից կաթկաթեց ալ արյուն:

Շատ անգամ զոհերիդ ծվատված
Ճիչերից սարսափեց և աստված .
Վառ արև քո ոճրին լուռ վկա՝
Երկնքում դատ, պատիժ քեզ չկա:

Եվ մի՞թե անպատիր իմ հոգուն՝
Որ այնտեղ կը թռչի միշտ անքուն
Քեզ նման կզգվեն խնդագին,
Արյունոտ ճանկերիդ ունի գին:

1907 թ. 14 դեկտեմբերի